



Հաստատված է

«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ
Խորհրդի նիստի
արձանգրությամբ առ 01.11.2011թ.
ուժի մեջ է՝ 25.11.2011թ.

Խորհրդի Նախագահ
Գագիկ Զաքարյան

ԲԱՆԿԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Երևան 2011

ԲՈՎԱԴԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ
7. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ
8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԼՔՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ
10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
11. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
12. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ԿԱՐԳԸ)
13. ՍՈՒՔՐՈՂԱՑԻԱ
14. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ
15. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.1. **Ապահովագրող**՝ «ՌԵՍՈ» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան ստեղծված և ՀՀ տարածքում ոչ կյանքի ապահովագրության իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ:
- 1.2. **Ապահովադիր**՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած իրավաբանական անձ:
- 1.3. **Շահառու**՝ Ապահովադրի կողմից նշանակված իրավաբանական կամ ֆիզիկական անձ Ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցումներ ստանալու համար:
- 1.4. **Ապահովագրական գումար**՝ ապահովագրության պայմանագրով որոշված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության յուրաքանչյուր պատահարի տեղի ունենալու պարագայում, ապահովագրության պայմանագրով նախատեսված կարգով վճարել ապահովագրական հատուցում:
- 1.5. **Ապահովագրավճար**՝ ապահովագրության դիմաց տրվող վճարն է, որը Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին ապահովագրության պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով:
- 1.6. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)**՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված վնասի այն մասն է, որը ենթակա չէ Ապահովագրողի կողմից հատուցման և կարող է սահմանվել ինչպես բացարձակ մեծությամբ, այնպես էլ ապահովագրական գումարի կամ ապահովագրական հատուցման նկատմամբ հաշվարկվող տոկոսի միջոցով: Չհատուցվող գումարը վերաբերում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարին և նվազեցվում է ապահովագրական հատուցումից յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում:
- 1.7. **Ապահովագրական ռիսկ**՝ Հավանական դեպք կամ իրադարձություն, որի ի հայտ գալու դեպքում իրականացվում է ապահովագրություն: Դեպքը կամ իրադարձությունը, որը դիտվում է որպես ապահովագրական ռիսկ, պետք է օժտված լինի ի հայտ գալու հավանականությամբ և պատահականությամբ:
- 1.8. **Ապահովագրական պատահար**՝ Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի վրա հասնելու արդյունքում առաջանում է Պայմանագրով նախատեսված Ապահովագրական հատուցում վճարելու Ապահովագրողի պարտավորությունը:
- 1.9. **Ապահովագրության պայմաններ**՝ սույն ապահովագրության պայմանները, որոնց հիման վրա կնքվում է ապահովագրության պայմանագիրը: Ապահովագրության պայմանները կազմում են ապահովագրության պայմանագրի անբաժանելի մաս:
- 1.10. **Ապահովագրության պայմանագիր**՝ Ապահովադրի և Ապահովագրողի միջև համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրության պայմանագրով սահմանված վճարի դիմաց ապահովագրական պատահարի առաջացման դեպքում հատուցել Ապահովադրին կամ այլ անձին, որի օգտին կնքվել է պայմանագիրը, ապահովագրված գույքին պատճառված վնասը, որն առաջացել է այդ պատահարի հետևանքով կամ վնասը՝ կապված Ապահովադրի գույքային այլ շահերի հետ: Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակայող ուժ ունեն ապահովագրության սույն Պայմանների նկատմամբ:

Ապահովագրության սույն Պայմանների շրջանակներում առանձին տերմիններով տրված են հատուկ սահմանումներ, որոնք կիրառելի են միայն ապահովագրության սույն Պայմանների շրջանակներում:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 2.1. Ապահովագրության պայմանագիր կնքելիս Ապահովադիրը պետք է գլխավոր գրասենյակից բացի նշի նաև Բանկի բոլոր այն մասնաճյուղերը և բաժինները, որոնց վրա պետք է տարածվի սույն պայմաններով սահմանված ապահովագրությունը:
- 2.2. Ապահովագրությունը չի տարածվում ինչպես Ապահովադրի դուստր ձեռնարկությունների,

այնպես էլ այն իրավաբանական անձանց վրա, որոնք պատկանում են բանկին համասեփականության իրավունքով, եթե անգամ վերջիններս իրականացնում են բանկային գործունեություն:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Ապահովագրության օբյեկտ են համարվում ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք կապված են Ապահովադրի գույքի կորստի (ոչնչացման), վնասվելու ռիսկերի հետ, ինչպես նաև Ապահովադրի լրացուցիչ ծախսերի հետ, որոնք նա կարող է կրել իր կողմից իրականացվող բանկային գործունեության ընթացքում:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Ապահովագրությունը տարածվում է՝

4.1.1. կանխամտածված գործողությունների արդյունքում առաջացած վնասի վրա, որն Ապահովադրին վնաս հասցնելու կամ իր համար ապօրինի ֆինանսական շահ ձեռք բերելու նպատակով իրականացրել է Ապահովադրի ցանկացած աշխատակից՝ ինչպես միայնակ, այնպես էլ այլ անձանց հետ համաձայնեցված կերպով մասնավորապես հետևյալ դեպքերում.

- իրավաբանական անձանց վարկերի տրամադրման,
- ֆիզիկական անձանց վարկերի (փոխառությունների) տրամադրման,
- առևտրային գործարքների իրականացման (ցանկացած գործարք, որը կապված է արժեթղթերի առք ու վաճառքի, թանկարժեք մետաղների և այլ ապրանքների, ֆյուչերսների, օպցիոնների, արժույթի և այլնի հետ):

4.1.1.1. Սույն պայմանների 4.1.1. ենթատեքստի համաձայն աշխատակիցներ են համարվում՝

- անձինք (այդ թվում Ապահովադրի ղեկավար աշխատակիցները, եթե նրանք չեն մտնում Բանկի վարչության (տնօրինության) մեջ և աշխատում են վարձատրությամբ), որոնք աշխատում են Ապահովադրին պատկանող շինություններում, ստանում են աշխատավարձ և իրենց պարտականությունները կատարելու ողջ ժամանակահատվածում ենթարկվում են Ապահովադրին,
- Ապահովադրի ղեկավար պաշտոններ զբաղեցնող աշխատակիցները, որոնք համարվում են Բանկի վարչության (տնօրինության) անդամներ և աշխատում են վարձատրությամբ այն ժամանակահատվածում, երբ նրանք Ապահովադրի վարչության կամ տնօրենների խորհրդի որոշմամբ Ապահովադրին պատկանող շինություններում զբաղվում են այնպիսի աշխատանքի կատարմամբ, որը մտնում է վարձու աշխատողի պարտականությունների մեջ,
- անձինք, որոնք ժամանակավոր աշխատանք են ստացել Ապահովադրին պատկանող և նրա հսկողության տակ գտնվող շինություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքը կապված է էլեկտրոնային տվյալների մշակման, ծրագրավորման, ծրագրային ապահովման և նմանատիպ այլ գործունեության հետ:

4.1.2. Այն վնասների վրա, որոնք կապված են Բանկի շենքում պահվող արժեքավոր գույքի կորստի (ոչնչացում), վնասման հետ (բացառությամբ այն գույքի, որը նշված է 4.1.7. կետում), որը պատկանում է.

ա) Ապահովադրին հետևյալ դեպքերում՝

- գողության, որը կատարվել է Բանկի շենք մուտքի իրավունք ունեցող անձի կողմից (Ապահովադրի գույքի գողության, կողոպուտի կամ ցանկացած այլ ձևով դրա հափշտակման դեպքում, որի նպատակն է զրկել վերջինիս այդ գույքը տիրապետելու, տնօրինելու կամ կառավարելու հնարավորությունից),

- վնասման, ոչնչացման, կորստի:

բ) Բանկի հաճախորդին կամ նրա ներկայացուցչին, ինչը տեղի է ունեցել այդ արժեքավոր գույքը (արժեքները) գողանալու արդյունքում և կարող է հանգեցնել նրան, որ վերջիններս Ապահովադրին ներկայացնեն գույքային պահանջ:

Ապահովադրի տարածքը Ապահովադրի գլխավոր գրասենյակն է, ինչպես նաև ապահովագրության դիմումի մեջ նշված մյուս շինությունները, որոնք մշտապես կամ ժամանակավորապես իր գործունեությունն իրականացնելու համար զբաղեցված են Ապահովադրի կողմից:

4.1.3. Փոխադրման ժամանակ արժեքավոր գույքի կորստի հետևանքով առաջացած վնասներ.

ա) Ապահովադրի աշխատակիցների կամ ինկասացիոն ընկերության կողմից հատուկ սարքավորված (գրահապատ) ավտոտրանսպորտային միջոցներով Ապահովադրի հրահանգով տեղափոխման ժամանակ արժեքավոր գույքի կորստի կամ վնասման դեպքում:

Արժեքավոր գույքը ներառում է.

- կանխիկ դրամ (արժույթ), մետաղադրամ,
- ձուլակտորներ, ցանկացած տեսակի թանկարժեք մետաղներ և նրանցից պատրաստված իրեր,
- թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր,
- ապահովագրական վկայագրեր,
- ճանապարհային չեկեր, չեկեր,
- բաժնետոմսերի վկայականներ,
- պարտատոմսեր, կուպոններ,
- հասարակ և փոխանցելի մուրհակներ,
- բանկային ակցեպտներ,
- դեպոզիտային և խնայողական վկայագրեր,
- կոնսումենտներ,
- պահեստային ստացականներ,
- ակրեդիտիվներ, դրամական փոխանցումներ,
- սեփականության կամ որևէ այլ եկամուտ ստանալու իրավունքը ամրագրող վկայագրեր և այլ փաստաթղթեր:

Ինկասացիոն ընկերությունն այն ընկերությունն է, որը պայմանագրային պայմաններով մատուցում է արժեքավոր գույքի (արժույթի) տեղափոխման ծառայություն անվտանգության ծառայության ուղեկցությամբ:

բ) Ինկասացիոն ընկերության կողմից փոխադրման ժամանակ Ապահովադրի ներքին թղթավարությունը ներկայացնող և ֆինանսական շուկայում շրջանառվող արժեթղթերին չվերաբերող ֆինանսական փաստաթղթերի ցանկացած պատճառով կորստի կամ վնասման դեպքում:

Փոխադրումը համարվում է սկսված արժեքավոր գույքը և/կամ արժույթը Ապահովադրի կամ նրա հանձնարարությամբ այլ անձի կողմից փոխադրողին ստորագրությամբ հանձնելու պահից և ավարտված՝ արժեքավոր գույքի և/կամ արժույթի առաքմամբ ստացողին կամ նրա գործակալին ստորագրությամբ դրանք հանձնելու պահին:

4.1.4. Վնասներ կեղծման կամ կանխամտածված փոփոխությունների իրականացման դեպքում.

ա) Ապահովադրի կողմից տրված ստորագրության կեղծման կամ կանխամտածված կերպով անօրինական փոփոխությունների իրականացումից՝

- չեկերում (փոխանցելի մուրհակի տարատեսակ, հաճախորդի անվերապահ հանձնարարականի տեսքով, որտեղ վճարողի դերում հանդես է գալիս Բանկը, որը վարում է նրա ընթացիկ հաշիվը, ինչի հիման վրա Բանկը պարտավոր է վճարել որոշակի գումար չեկը տրամադրողին կամ չեկում նշված այլ անձին),
- մուրհակներում (մուրհակատուի կողմից մուրհակապահին դուրս գրած ոչ պայմանական գրավոր պարտավորագրեր, որոնք

ներառում են պահանջի ներկայացման դեպքում վճարման պարտավորություններ որոշակի ժամկետում կամ մուրհակապահին, կամ նրա հանձնարարականով այլ անձին),

- բանկային ակցեպտներում (Բանկի կողմից ակցեպտավորված փոխանցելի մուրհակներ),
- դեպոզիտային վկայագրերում (փաստաթղթեր, որոնք տրվել են Բանկի կողմից ի հաստատումն այն բանի, որ նա ընդունել է պահպանման դրամական ներդրում և պարտավորվել է որոշակի ժամանակահատվածի լրանալուց հետո պահանջի ներկայացման դեպքում այն ետ վերադարձնել ներդրողին կամ լիազորագրի առկայության դեպքում այլ անձի՝ տոկոսների հետ միասին):

բ) հաշվեհամարից կամ մուրհակից գումար հանելու այն հանձնարարականի մեջ, որն ընդունված է Ապահովադրի կողմից վճարման ստորագրության կեղծման կամ կանխամտածված անօրինական փոփոխությունների իրականացմամբ:

Վնասները փոխհատուցվում են Ապահովադրին միայն այն դեպքերում, եթե.

- վերոհիշյալ վճարային փաստաթղթերը կազմվել են գրավոր (փաստաթղթային) ձևով,
- Ապահովադրի աշխատակիցը, որն աշխատում է այդ վճարային փաստաթղթի հետ, ունի բնօրինակ փաստաթղթերի նմուշները,
- վնասը պատճառվել է այն բանի պատճառով, որ Ապահովադրի աշխատակիցը չի կարողացել ժամանակին տարբերել կեղծը բնօրինակից:

Կեղծ է ճանաչվում այն ստորագրությունը, որը դրվել է այլ անձի կողմից առանց դրա համապատասխան իրավասության:

Անօրինական փոփոխություններ են համարվում խարդախության նպատակով ֆինանսական փաստաթղթերում կատարված գրավոր փոփոխություններն այն անձի կողմից, որը չէր զբաղվում այդ փաստաթղթերի պատրաստմամբ:

4.1.5. Վնաս, որը կրել է Ապահովադիրը արժեթղթերով գործառնություններ կատարելիս.

- որոնք պարունակել են կեղծ ստորագրություն,
- որոնցում իրականացվել են կանխամտածված անօրինական փոփոխություններ,
- որոնք եղել են կեղծ (կեղծ արժեթուղթ է համարվում արժեթղթի կրկնօրինակը, որն արվել է բնօրինակից՝ Ապահովադրին խաբելու նպատակով և այնքան նման է բնօրինակին, որ, չկարողանալով տարբերել իրականից, Ապահովադիրը կրում է կորուստներ),
- որոնք կորել կամ գողացվել են:

Վնասները փոխհատուցվում են այն պայմանով, որ.

ա) նրանք առաջացել են Ապահովադրի ֆիզիկական տիրապետության տակ գտնվող արժեթղթերով գործառնություններ կատարելու ժամանակ (արժեթղթերի տեսքով տրված փոխառությունների դեպքում, երբ Ապահովադիրը թղթակից բանկերի միջոցով մասնակցում է դրանց թողարկմանը, փոխհատուցումը տրվում է միայն այն վնասների գծով, որոնք հայտնաբերվել են Ապահովադրի կողմից այդ արժեթղթերը ֆիզիկապես տիրապետելու ժամանակ): Ընդ որում, Ապահովադրի ֆիզիկական տիրապետության տակ գտնվող արժեթղթեր են համարվում.

- բիզնեսի վարման ընդհանուր շրջանակներում այլ Բանկում գրավադրված արժեթղթերը:

բ) արժեթղթերը կազմվել են գրավոր (փաստաթղթային) ձևով, ընդ որում, Ապահովադրի աշխատակիցը, որն աշխատում է կոնկրետ փաստաթղթերի հետ, ունի բնօրինակ փաստաթղթերի նմուշները:

գ) վնասը պատճառվել է այն բանի պատճառով, որ Ապահովադրի աշխատակիցը չի կարողացել ժամանակին տարբերել կեղծը բնօրինակից:

Արժեթղթերի տակ հասկացվում է.

ա) բաժնետոմսերի վկայագրերը, կապիտալում բաժնետոմսերի մասնաբաժնի վերաբերյալ վկայականները, արժեթղթերի ձեռքբերման վառանսները, բաժնետիրական ընկերությունների պարտատոմսերը,

բ) ընկերակցությունների պարտատոմսերը, որոնք ձևով նման են կորպորատիվ պարտատոմսերին և ապահովված են գույքով, այդ թվում և երրորդ անձանց,

գ) պետական արժեթղթերը կամ արժեթղթեր՝ երաշխավորված պետության կողմից, տեղական ինքնակառավարման մարմինների արժեթղթեր,

դ) անշարժ գույքի գրավաթղթերը, փաստաթղթեր, որոնք հաստատում են գրավի փոխացման իրավունքը,

ե) սովորական մուրհակները, բացառությամբ.

➤ ֆինանսական մուրհակներից,

➤ սեփական և Ապահովադրի կողմից վճարած մուրհակներից:

զ) դեպոզիտային և խնայողական վկայագրերը, որոնք ստացել է Ապահովադիրը փոխառուից՝ որպես գրավ, բացառությամբ Ապահովադրի կողմից շրջանառության դրված վկայագրերից,

է) ակրեդիտիվները (բանկային փաստաթղթեր, որոնք տրվում են հաճախորդի ցուցումով և երաշխավորում են երրորդ անձանց որոշակի գումարի վճարում, որպես կանոն այլ բանկի միջոցով, դրանում նշված պայմանների կատարման դեպքում):

4.1.6. Վնաս Ապահովադրի կողմից աշխարհի ցանկացած երկրի կեղծ թղթադրամը կամ մետաղադրամը որպես վճարամիջոց ընդունելու հետևանքով, այն պայմանով, որ իրական արժույթի սովորական դետեկտորները, որոնք օգտագործում է Ապահովադիրը, չէին կարող բացահայտել կեղծը, և որ թղթադրամները (մետաղադրամները) դուրս չեն եկել շրջանառությունից:

4.1.7. Վնասներ, որոնք տեղի են ունեցել երրորդ անձանց հակաօրինական գործողությունների հետևանքով.

ա) Ապահովադրի գույքը գողանալու, կողոպտելու, ինչպես նաև վանդալիզմի կամ կանխամտածված կերպով վնասի հասցման հետևանքով,

բ) Ապահովադրի այն գույքի կորստի կամ վնասի հետևանքով առաջացած վնասները, որոնք գտնվում են Բանկի շինություններում՝ կողոպուտի կամ դրա կատարման փորձի արդյունքում, ինչպես նաև վանդալիզմի կամ կանխամտածված կերպով վնասի հասցման դեպքում:

Ապահովադրի գույքի տակ հասկացվում են առարկաները, որոնք համարվում են Ապահովադրի սեփականությունը կամ որոնց համար Ապահովադիրը պատասխանատվություն է կրում դրա կորստի կամ վնասի դեպքում.

➤ Ապահովադրին սեփականության իրավունքով պատկանող տարածքները, ներքին հարդարման տարրերը,

➤ կահավորանքի առարկաները,

➤ համակարգչային տեխնիկան, կենցաղային տեխնիկան,

➤ չիրկիզվող պահարանները և պահոցները:

4.2. Ապահովադրի կրած վնասների բոլոր դեպքերը ինչպես կանխամտածված գործողությունների, այնպես էլ մեկ անձի անփութության դեպքում առաջ եկածներն անկախ նրանից, թե նա Ապահովադրի աշխատակիցն է, թե ոչ, պետք է դիտարկվեն որպես մեկ կորուստ:

4.3. Սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն ապահովագրությամբ ծածկվող ապօրինի անձնական շահին չի վերաբերում.

➤ աշխատավարձը և դրա բարձրացումը,

➤ Ապահովագրողի կողմից վճարվող հոնորարները, միջնորդավճարները,

➤ մասնակցությունն Ապահովադրի շահույթին,

➤ Ապահովադրի կողմից վճարվող եկամտի կամ պարգևավճարների այլ ձևերը, ներառյալ մասնակցությունը գործնական հանդիպումներին,

թանկարժեք նվերները, ճանապարհային ծախսերը, սնունդը, արձակուրդը և այլն:

- 4.4. Չեն փոխհատուցվում սույն պայմանների 4.1.2. կետի համաձայն ապահովագրությամբ ծածկվող արժեքավոր գույքի կորստի դեպքում առաջացած այն վնասները, որոնք առաջացել են ուղղակի կամ անուղղակի կերպով կամ եղել են ահաբեկչական գործողությունների հետևանք, սակայն այդ բացառությունը չի տարածվում գողության կամ դրա փորձի արդյունքում առաջացած վնասի վրա, և ցանկացած իրավական քննության ժամանակ այն փաստի ապացուցելու պարտականությունը, որ վնասը չի մտնում նշված բացառությունների մեջ, ընկնում է Ապահովադրի վրա:
- Ահաբեկչական գործողություն է համարվում կազմակերպության անունից կամ նրա հետ համատեղ մեկ անձի (մի խումբ անձանց) կողմից իրականացված գործողությունները, որը նպատակ է հետապնդում տապալել կառավարությունը կամ նրա վրա ճնշում գործադրել ուժի կիրառման կամ բռնության միջոցով քաղաքական նպատակների հասնելու համար:
- 4.5. Չեն փոխհատուցվում սույն պայմանների 4.1.2. բ կետի համաձայն ապահովագրությամբ ծածկվող վնասները, եթե Բանկի հաճախորդին կամ նրա ներկայացուցչին պատկանող արժեքների ոչնչացման, կորստի մեջ մեղավոր է եղել Բանկի հաճախորդը կամ նրա ներկայացուցիչը:
- 4.6. Չեն փոխհատուցվում այն տեղեկատվության և տվյալների կորստի կամ վնասի դեպքում առաջացած վնասները, որոնք գտնվում են մագնիսական կրիչների վրա, ինչպես նաև բոլոր տեսակի էլեկտրոնային հաշիվների խափանման (սխալների) դեպքում առաջացած կորուստները, որոնք չեն վերաբերում արժեքավոր գույքին:
- 4.7. Չեն փոխհատուցվում սույն պայմանների 4.1.5. կետի համաձայն ապահովագրությամբ ծածկվող այն վնասները, որոնք առաջանում են արժեթղթերի հետ գործարքների իրականացման արդյունքում և որոնք պարունակում են միայն կեղծ տեղեկատվություն (սույն պայմանների համաձայն այդ արժեթղթերը չեն դասվում կեղծերի շարքին), ինչպես նաև ոչ փաստաթղթային մուրհակներից առաջացած վնասները:
- 4.8. Եթե այլ բան հատուկ նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, չեն փոխհատուցվում սույն պայմանների 4.1.7. կետի համաձայն ապահովագրությամբ ծածկվող այն վնասները, որոնք պատճառվել են.
- համակարգչային ծրագրերին, համակարգչային տեղեկատվությանը, տեղեկատվության կրիչներին (մագնիսային ժապավեններ, սկավառակներ և այլ կրիչներ),
 - հրդեհի դեպքում՝ անկախ նրա առաջացման պատճառից,
 - ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ահաբեկչական գործողության հետևանք համարվող վնասները (սակայն սույն բացառությունը չի տարածվում այն կորուստների վրա, որոնք կրել է Ապահովադիրը գողության կամ դրա փորձի արդյունքում, ընդ որում սույն ապահովագրության համաձայն վնասի փոխհատուցման վերաբերյալ առարկություն ներկայացնելու դեպքում, ինչպես նաև ցանկացած իրավական քննության ժամանակ այն փաստն ապացուցելու պարտականությունը, որ վնասը չի մտնում նշված բացառությունների մեջ, ընկնում է Ապահովադրի վրա):
- 4.9. Եթե այլ հատուկ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապահովագրական պատահար չեն համարվում.
- ա) վնասները
- որոնք կրել է Ապահովադիրը մինչ ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելը, ներառյալ բոլոր այն գործառնությունների գծով կորուստները, որոնք իրականացվել են մինչ պայմանագրի ուժի մեջ մտնելը,
 - որոնք հայտնաբերվել են Ապահովադրի կողմից մինչ ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելը,
 - որոնք հայտնաբերվել են ապահովագրության պայմանագրի ժամկետի ավարտից հետո,

- որոնց մասին տեղյակ է պահվել այլ Ապահովագրողներին, որոնց հետ Ապահովադիրը ավելի վաղ կնքել էր ապահովագրության պայմանագիր:
- բ) Ապահովադրի ամբողջությամբ կամ մասամբ կրած վնասը՝ Ապահովադրի այն դեկավար անձանց գործողությունների կամ սխալի հետևանքով, ովքեր համարվում են Բանկի վարչության (տնօրինության) անդամներ, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչության (տնօրինության) կամ տնօրենների խորհրդի հանձնարարականով դեկավարը իրականացնում է վարձու աշխատողի պարտականություններ:
- գ) վնասը, ամբողջությամբ կամ մասամբ՝ առաջացած ինչպես ամբողջական, այնպես էլ մասնակի չվճարումների կամ փոխառությունների ու վարկերի գծով պարտավորությունների չկատարման հետ, անկախ նրանից, դրանք օրինական թե անօրինական ճանապարհով են ստացվել, բնօրինակ թե կեղծ փաստաթղթերով, օրինական ճանապարհով, թե խաբեության միջոցով, կեղծիքի և այլ կանխամտածված հակաօրինական գործողությունների միջոցով, բացառությամբ այն դեպքերի, որոնք նշված են սույն պայմանների 4.1.1., 4.1.4. և 4.1.5. կետերում:
- դ) վնասը, որն ամբողջությամբ կամ մասնակի առաջացել է Ապահովադրի կողմից իրականացված վճարումների կամ դուրսգրումների հետևանքով, որոնք հանդիսանում են իրականացված գործարքների գծով նրա պարտավորությունը, և որոնք ամբողջությամբ չեն կատարվել ցանկացած պատճառով, այդ թվում կեղծիքի և այլ կանխամտածված հակաօրինական գործողությունների, բացառությամբ այն դեպքերի, որոնք նշված են սույն պայմանների 4.1.1. և 4.1.5. կետերում:
- ե) վնասը, որը կրել է Ապահովադիրը սխալ վճարումների, փոխանցումների, դրամական միջոցների մատակարարման և այլ հաշիվների հետ գործարքներ իրականացնելիս, բացառությամբ այն դեպքերի, որոնք նշված են սույն պայմանների 4.1.1. կետում:
- զ) վնասը, որը կրել է Ապահովադիրը ցանկացած առարկայի վնասի դեպքում, ներառյալ գույքը (բացառությամբ կորուստների, որոնք ծածկվում են սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն).
 - որը պահպանվում է հաճախորդի անհատական արկղում,
 - որը տրվել է Ապահովադրին անվտանգ պահպանման՝ հաճախորդի անունից, բացառությամբ պահպանության հանձնված և հաշվառված արժեթղթերի:
- է) վնասը, որը կրել է Ապահովադիրը թանկարժեք գույքի ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի կամ այլ գույքի վերացման արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ.
 - սպառնալիքի աղբյուր է համարվում Ապահովադրի աշխատակիցը, որը գործում է իր համար ապօրինի ֆինանսական օգուտ ստանալու նպատակով, և եթե այդ վնասը ծածկվում է սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն,
 - թանկարժեք գույքի փոխանցումն իրականացվում է Ապահովադրի տարածքում գտնվող անձի կողմից այլ անձի կողմից մարմնական վնասվածքներ հասցնելու անմիջական սպառնալիքի տակ, որը նույնպես գտնվում է Ապահովադրի տարածքում, և եթե այդ վնասը ծածկվում է սույն պայմանների 4.1.2. կետի համաձայն,
 - թանկարժեք գույքի փոխանցումն իրականացվում է գույքի տեղափոխման ժամանակ, և ֆիզիկական ներգործության սպառնալիքի տակ են գտնվում անձինք, որոնց վստահված էր բեռի փոխադրումը, այն պայմանով, որ մինչ բեռնափոխադրում իրականացնելը Ապահովադիրը տեղեկություն չունեի պատրաստվող հարձակման մասին, և որ այդ վնասը ծածկվում է համաձայն սույն պայմանների 4.1.3. կետի:
- ը) ուղղակի և անուղղակի վնասները, որոնք կրել է Ապահովադիրը այլ կեղծումների և/կամ հակաօրինական փոփոխությունների իրականացման արդյունքում, որոնք չեն ծածկվում սույն պայմանների 4.1.1., 4.1.4., 4.1.5. և 4.1.6. կետերի համաձայն:
- թ) ուղղակի և անուղղակի վնասները, որոնք կրել է Ապահովադիրը այլ կեղծումների և/կամ ճանապարհային չեկերի ու ճանապարհային ակրեդիտիվների անօրինական փոփոխությունների արդյունքում, որոնք չեն ծածկվում սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն:

ժ) վնասները, որոնք կրել է Ապահովադիրը չվաճառված ճանապարհային չեկերի կորստի դեպքում, որոնք տրվել էին Ապահովադրի պատասխանատվությանը վաճառքի համար, բացառությամբ այն վնասների, որոնք ծածկվում են սույն պայմանների 4.1.1., 4.1.2. և 4.1.3. կետերի համաձայն, այն պայմանով, որ այդ չեկերը, որոնց համար Ապահովադիրը պատասխանատվություն է կրում, հետագայում վճարվել են կամ ընդունվել են վճարման արժեթղթեր թողարկող հաստատության կողմից:

ի) ուղղակի և անուղղակի վնասները, որոնք կրել է Ապահովադիրը ինչպես բնօրինակ, այնպես էլ կեղծ կոնտամենտներից, ապրանքագրերից, պահեստային ստացականներից, լիազորագրերից և այլ ցանկացած հաշիվներից, փաստաթղթերից և ստացականներից, բացառությամբ վնասների, որոնք ծածկվում են սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն, ինչպես նաև վնասների, որոնք կրում է Ապահովադիրը փաստաթղթերի կորստի դեպքում, որոնց կորուստը ծածկվում է սույն պայմանների 4.1.2. և 4.1.3. կետերի համաձայն:

լ) ուղղակի և անուղղակի վնասները, որոնք կրել է Ապահովադիրը պլաստիկ կրեդիտային, դեբետային և այլ քարտերի գործածումից, որոնք դրվել են շրջանառության (թողարկվել են) կամ իբր դրվել են շրջանառության ինչպես Ապահովադրի, այնպես էլ այլ ֆինանսական ինստիտուտի կողմից, բացառությամբ այն վնասների, որոնք ծածկվում են սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն:

խ) վնասները, որոնք կապված են եկամտի (շահույթի) կորստի կամ արժեզրկման հետ՝ ներառյալ տոկոսները, դիվիդենդները, հոնորարները, միջնորդավճարները, աշխատավարձը և այլ լրավճարները:

ծ) ամբողջական կամ մասնակի վնասները, որոնք կրել է Ապահովադիրը այլ ֆինանսական կազմակերպության կամ դեպոզիտարիայի պատճառով, ինչպես նաև նրանց իրավահաջորդի կամ լուծարային հանձնաժողովի (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ վնասը ծածկվում է սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն) պատճառով և կապված է.

- թանկարժեք գույքի կամ դրամական միջոցների չվճարման, չվերադարձման կամ չառաքման հետ, որոնք գտնվում են նրանց հսկողության տակ,
- Ապահովադիրին կրած այն վնասների փոխհատուցման մերժելու հետ, որոնց համար նա պատասխանատվություն է կրում:

կ) Ապահովադրի կողմից կրած վնասները նրա նկատմամբ կիրառած տուգանքների հետևանքով, բացառությամբ ուղղակի ֆինանսական վնասների, որոնք կրել է Ապահովադիրը անմիջապես իր կողմից երրորդ անձանց տրամադրված փոխհատուցումների արդյունքում՝ նրանց այն օբյեկտների կապակցությամբ վնաս հասցնելու պատճառով, որոնք ընկնում են սույն ապահովագրության ծածկույթի տակ:

հ) ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովադրի կողմից կրած անուղղակի վնասները, ինչպես նաև ցանկացած տեսակի հաջորդող վնասները:

ձ) վնասի փաստի և չափի հաստատման կամ դրա փորձի համար Ապահովադրի կրած ծախսերը, որոնք ծածկվում են սույն ապահովագրությամբ:

դ) իր շահերի պաշտպանության համար Ապահովադրի կրած ծախսերը, բացառությամբ իրավական պաշտպանության համար կատարված ծախսերի, որոնք ծածկվում են սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն:

ճ) առևտրային գործարքների արդյունքում առաջացած ուղղակի կամ անուղղակի վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ վնասները ծածկվում են սույն պայմանների 4.1.1., 4.1.4. և 4.1.5. կետերի համաձայն:

մ) գույքի բնական մաշվածության կամ հնեցման, դանդաղ ոչնչացման, ինչպես նաև ցեցի կամ այլ միջատների, կրծողների, սնկերի հետևանքով դրա վնասման արդյունքում Ապահովադրի կրած ծախսերը:

յ) վնասները, որոնք պատճառվել են տարերային աղետների և բնական աղետների հետևանքով (թայֆուն, փոթորիկ, ցիկլոն, հրաբխի ժայթքում, երկրաշարժ և այլն) և հաջորդող հրդեհների, հեղեղումների, կողոպուտի և այլնի հետևանքով:

ն) վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակի կապված են պատերազմի, պատերազմական գործողությունների, ներխուժման, արտաքին ռազմական

գործողությունների (անկախ նրանից հայտարարվել է պատերազմ թե ոչ), ըմբոստության, հեղափոխության, քաղաքացիական հուզումների, քաղաքացիական պատերազմի, ռազմական դրության և իշխանության յուրացման, պարետային ժամի կամ օրինական իշխանության համապատասխան գործողությունների հետ, ընդ որում, ապահովագրության պայմանագրով վնասների վերականգնման ցանկացած փուլում՝ ներառյալ արբիտրաժային կամ դատական վարույթը, այն փաստի ապացուցման պարտականությունը, որ վնասը չի մտնում բացառությունների մեջ, ընկնում է Ապահովադրի վրա:

2) գույքի ցանկացած վնասը, կորուստը կամ ոչնչացումը, կրած ծախսերը կամ Ապահովադրի իրավական պատասխանատվությունը երրորդ անձանց նկատմամբ այն վնասների համար, որոնք առաջացել են ուղղակի կամ անուղղակի կամ համարվում են հետևյալի արդյունք՝

- իոնացնող ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի (միջուկային վառելիք, ռադիոակտիվ թափոններ, միջուկային վառելիքի թափոններ),
- ռադիոակտիվ, տոքսիկ, պայթյունավտանգ կամ այլ նյութի օգտագործում, որն իր պարունակության մեջ ունի ռադիոակտիվ բաղադրություն և դրանց բաղադրիչներ,

ո) էլեկտրոնային տվյալների մուտքագրման, ձևափոխման, վերացման հետևանքով Ապահովադրի կրած վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ վնասները ծածկվում են սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն:

չ) Ապահովադրի՝ սեփական համակարգչային ցանց տեղեթայփի, տերմինալի կամ այլ սարքավորման օգնությամբ, որը նշված է հրահանգներում կամ վճարման հաղորդագրություններում, մուտքագրում իրականացնելիս կրած վնասը, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ վնասները ծածկվում են սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն:

պ) Ապահովադրի կրած վնասները թանկարժեք գույքի կորստի հետևանքով, որը վստահված է եղել փոխանցման պետական փոստային ծառայությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ վնասները ծածկվում են սույն պայմանների 4.1.1. կետի համաձայն:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ

5.1. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրի գործողությունը տարածվում է ՀՀ և ԼՂ տարածքում:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրական գումարը չպետք է գերազանցի.

- սույն պայմանների 4.1.2., 4.1.3., 4.1.7. կետերի պայմաններով ապահովագրության դեպքում ապահովագրված գույքի իրական արժեքը (ապահովագրական արժեք): Այդպիսի արժեք է համարվում գույքի գտնվելու վայրում ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ դրա իրական արժեքը,
- սույն պայմանների 4.1.1., 4.1.4., 4.1.5., 4.1.6. կետերի պայմաններով ապահովագրության դեպքում ուղղակի իրական վնասները բանկային գործունեությունից, որոնք Ապահովադիրը, որպես կանոն, կկրեր ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամանակ:

6.2. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ կողմերը սահմանում են.

- ա) յուրաքանչյուր ռիսկի գծով ապահովագրական հատուցման սահմանաչափերը,
- բ) մեկ ապահովագրական պատահարի գծով ապահովագրական հատուցման սահմանաչափերը,
- գ) ապահովագրական հատուցման սահմանաչափերը վնասների տեսակների գծով և այլն:

6.3. Եթե ապահովագրության պայմանագրում նշված ապահովագրական գումարը գերազանցում է գույքի իրական արժեքը, այդ թվում նույն օբյեկտի՝ երկու կամ մի քանի

ապահովագրողների մոտ ապահովագրված լինելու դեպքում (կրկնակի ապահովագրություն), պայմանանագիրը համարվում է առոչինչ ապահովագրական գումարի այն մասով, որը գերազանցում է իրական արժեքը, իսկ ավել վճարված ապահովագրավճարը այս դեպքում վերադարձման ենթակա չէ:

Իսկ եթե ապահովագրական գումարի բարձրացումը ապահովագրության պայմանագրում եղել է Ապահովադրի կողմից խաբեության հետևանք, Ապահովագրողը իրավունք ունի պահանջել չեղյալ համարել պայմանագիրը և հատուցել դրանով իրեն պատճառած վնասները:

7. ԶՆԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

- 7.1. Ապահովագրության պայմանագրի կնքման ընթացքում կողմերի համաձայնությամբ կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար:
 - 7.1.1. Ապահովագրության պայմանագրում պայմանական չհատուցվող գումարի սահմանման դեպքում Ապահովագրողն ազատվում է վնասի համար պատասխանատվությունից, եթե դրա չափը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, և վնասը ամբողջությամբ ենթակա է հատուցման, եթե դրա չափը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
 - 7.1.2. Ապահովագրության պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումարի սահմանման դեպքում Ապահովագրողի պատասխանատվությունը որոշվում է վնասի չափով՝ հանելով չհատուցվող գումարը:
- 7.2. Չհատուցվող գումարի չափը որոշվում է կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ կամ բացարձակ մեծությամբ:
- 7.3. Ապահովագրության պայմանագրում չհատուցվող գումարի կիրառումը կարող է ծառայել ապահովագրական սակագնի նվազեցման վրա ազդող գործոն, բացառությամբ այն դեպքերի, երբ չհատուցվող գումարի կիրառումը պարտադիր պայման է տվյալ ռիսկի ապահովագրության համար:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1. Ապահովագրական սակագինն իրենից ներկայացնում է ապահովագրական գումարի միավորից ապահովագրավճարի դրույթ:
- 8.2. Ապահովագրական վճարի չափը սահմանվում է ապահովագրվող յուրաքանչյուր ռիսկերի գծով առանձին և կարող է ճշգրտվել՝ կախված փորձագետի կողմից ռիսկին առնչվող գործոնների սահմանումից:
- 8.3. Ապահովագրավճարը վճարվում է միանվագ վճարմամբ մեկ տարի ժամկետով ապահովագրության դեպքում կամ տարեկան՝ մի քանի տարի ժամկետով ապահովագրության դեպքում: Սակայն ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ կողմերը կարող են սահմանել ապահովագրական վճարների վճարման տարաժամկետ եղանակ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- 8.4. Ապահովագրավճարը վճարվում է անկանխիկ եղանակով ապահովագրության պայմանագրի ստորագրման օրվանից 7 բանկային օրվա ընթացքում Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
- 8.5. Մի քանի տարով ապահովագրության դեպքում հերթական տարեկան մուծումները վճարվում են հերթական ապահովագրության տարվան նախորդող ամսվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ և

ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 9.1. Ապահովագրության պայմանագիրը պետք է համապատասխանի գործարքի վավերության ընդհանուր պայմաններին, որոնք նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

- 9.2. Ապահովագրության պայմանագրի կնքման դիմումում Ապահովադիրը պարտավոր է տեղեկացնել Ապահովագրողին իրեն հայտնի այն հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական պատահարի առաջացման հավանականության և դրա առաջացումից հնարավոր վնասների չափի որոշման համար, եթե այդ հանգամանքները հայտնի չեն Ապահովագրողին:
- 9.3. Ապահովագրության պայմանագիրը ձևակերպվում է գրավոր և կարող է կնքվել մեկ փաստաթղթի կազմման և Ապահովագրողի կողմից Ապահովադիրին ստորագրված ապահովագրության վկայագրի հանձնման միջոցով:
 Ապահովագրողի կողմից ապահովագրության վկայագիրը տրվում է Ապահովադիրին Ապահովագրողի հաշվին ապահովագրավճարի մուտքագրման օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:
- 9.4. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի գործողության սկիզբ նշված օրվա 00:00 ժամից Ապահովադիրի կողմից ապահովագրավճարի պայմանագրով սահմանված ժամկետներում վճարման դեպքում և ավարտվում պայմանագրում որպես ապահովագրության պայմանագրի ավարտի օր նշված օրվա 23:59 ժամին:
- 9.5. Ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրությունը տարածվում է ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո տեղի ունեցած բոլոր ապահովագրական պատահարների վրա:
- 9.6. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է 9 ամսից ոչ պակաս ժամկետով:
- 9.7. Ապահովագրության պայմանագիրը դադարում է.
- գործողության ժամկետի ավարտի դեպքում,
 - Ապահովագրողի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարման դեպքում,
 - Ապահովադիրի կողմից ապահովագրավճարի (կամ նրա համապատասխան մասի) պայմանագրով սահմանված ժամկետներում չվճարման դեպքում,
 - Ապահովադիրի կամավոր կամ հարկադիր լուծարման, ինչպես նաև Արբիտրաժային կառավարչի կամ ժամանակավոր ադմինիստրացիայի նշանակման, վարկատուների հետ պայմանավորվածության ձեռք բերման, որևէ պետական մարմնի կողմից Ապահովադիրի գործունեության վրա վերահսկողություն սահմանելու դեպքում,
 - Ապահովագրողի լուծարման դեպքում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
 - դատարանի որոշմամբ ապահովագրության պայմանագրի գործողության դադարեցման դեպքում,
 - ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 9.8. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվում է, եթե նրա ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահարի առաջացման հնարավորությունը վերացել է, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից անկախ այլ հանգամանքների հետևանքով: Այդ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի ստանալ ապահովագրավճարի մի մասը՝ համամասնորեն այն ժամանակի համար, որի ընթացքում գործել է ապահովագրությունը:
- 9.9. Ապահովագրողի պահանջով, եթե այդ պահանջը պայմանավորված է Ապահովադիրի կողմից ապահովագրության պայմանների կամ ապահովագրության պայմանագրի պայմանների խախտմամբ, ապահովագրության պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել՝ դրա մասին Ապահովադիրին տեղեկացնելով ենթադրյալ խզման ամսաթվից ոչ պակաս, քան 3 օր առաջ, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Այդ դեպքում Ապահովագրողը վերադարձնում է ապահովագրական վճարը պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն՝ հանելով կրած ծախսերը, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
 Ապահովադիրի պահանջով ապահովագրության պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարել՝ դրա մասին Ապահովագրողին տեղեկացնելով ենթադրյալ խզման ամսաթվից ոչ պակաս, քան 30 օր առաջ, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Այդ դեպքում վճարված ապահովագրական վճարները ենթակա չեն վերադարձման

Ապահովադրին, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջը պայմանավորված է Ապահովագրողի կողմից ապահովագրության և/կամ ապահովագրության պայմանագրի պայմանների խախտման հետ, ապա վերջինս վերադարձնում է Ապահովադրին նրա կողմից վճարված ապահովագրական վճարներն ամբողջությամբ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ապահովագրողը պարտավոր է.

- ա) ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում վճարել ապահովագրական հատուցում, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում Ապահովադրին վճարել տույժ ապահովագրության պայմանագրով սահմանված չափով՝ 0,1% հատուցման գումարից՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար,
- բ) չհրապարակել իր մասնագիտական գործունեության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները Ապահովադրի մասին,
- գ) վճարել ապահովագրական հատուցում ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում Ապահովադրի կողմից բոլոր փաստաթղթերի ստացումից հետո, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի առաջացման պատճառների քննության և վնասի չափի մասին եզրակացություն կազմելու համար:

10.2. Ապահովադրի պարտավոր է.

- ա) ժամանակին վճարել ապահովագրական վճարները,
- բ) ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ տեղեկացնել Ապահովագրողին իրեն հայտնի այն բոլոր հանգամանքների մասին, որոնք նշանակություն ունեն ապահովագրական ռիսկի գնահատման հարցում, ինչպես նաև տվյալ ապահովագրության օբյեկտի նկատմամբ կնքված կամ կնքվելիք բոլոր ապահովագրության պայմանագրերի մասին,
- գ) Ապահովադրի դեմ հայցի ներկայացման կամ դատական գործընթացի սկսման դեպքում՝ սույն ապահովագրությամբ ծածկվող վնասների հետ կապված գործողությունների կամ դեպքերի շուրջ.
 - անհապաղ՝ իրեն հայտնի դառնալուց անմիջապես հետո, տեղեկացնել Ապահովագրողին ցանկացած այդպիսի հայցի կամ դատական գործի մասին և Ապահովագրողի պահանջով տրամադրել նրան դատական գործին առնչվող բոլոր դիմումների (հայցվորի և պատասխանողի) և այլ փաստաթղթերի կրկնօրինակները,
 - սույն ապահովագրությամբ ծածկվող վնասների հետ կապված գործողությունների կամ դեպքերի շուրջ Ապահովադրի դեմ ներկայացված հայցի ենթադրյալ հիմքերից պաշտպանվելու դեպքում անձամբ կրել դատական ծախսերը,
 - Ապահովագրողին տալ համապատասխան լիազորություններ վերջինիս կողմից նշանակված ներկայացուցիչների միջոցով և Ապահովադրի անունից վերջինիս շահերի պաշտպանության համար, ինչպես նաև տրամադրել Ապահովագրողին դրա համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը և ցուցաբերել հնարավոր առավելագույն օգնություն այդպիսի պաշտպանության իրականացման համար,
 - այն դեպքում, երբ Ապահովագրողի՝ Ապահովադրի շահերը պաշտպանելու ժամանակ կրած ծախսերի գումարը գերազանցում է ապահովագրության պայմանագրով հատուցվող գումարի չափը, Ապահովագրողին հատուցել նրա կողմից հատուցման գումարից ավել ծախսված գումարը,
 - անհիմն չհրաժարվել այն պայմանավորվածությունների համաձայն պարտականությունների իրականացումից, որոնք ձեռք են բերվել Ապահովագրողի կողմից Ապահովադրի անունից վերջինիս շահերի պաշտպանության ժամանակ,
- դ) այլ իրավաբանական անձի հետ միավորման, միաձուլման դեպքում, ինչպես նաև

սեփականության իրավունքների ձեռքբերման, վերագիջման, գույքի կամ բաժնետոմսերի փոխանցման, գրավի կամ վաճառքի դեպքում, որը հանգեցնում է Ապահովադրի սեփականության կամ կառավարման իրավունքների փոփոխության, այդ թվում այն դեպքում, երբ բաժնետոմսեր ունեցող մեկ անձի կամ միավորված բաժնետերերի խմբի մոտ կենտրոնացվում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասն և ավելի տոկոսը, ինչը թույլ է տալիս դիտարկել տվյալ փաստը որպես Ապահովադրի ղեկավարման կազմի փոփոխություն:

- ղեկավարման փոփոխության պահից 30 օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Ապահովագրողին տվյալ փաստի մասին (Ապահովագրողը համարվում է ծանուցված, եթե ծանուցումն ուղարկված է Ապահովադրի կողմից գրավոր ձևով և դրան ի պատասխան ստացվել է Ապահովագրողի գրավոր հաստատումը),
- անհրաժեշտության դեպքում օպերատիվ կերպով տրամադրել Ապահովագրողին անհրաժեշտ լրացուցիչ ողջ տեղեկատվությունը, ,
- ստանալ Ապահովագրողի գրավոր համաձայնությունը ապահովագրության պայմանների հնարավոր փոփոխություններով պայմանագրի գործողության շարունակման վերաբերյալ,
- Ապահովագրողի կողմից կատարված անհրաժեշտ փոփոխություններով հանդերձ ապահովագրության պայմանագրի ստանալու պահից 10 օրվա ընթացքում գրավոր վերջինիս տեղեկացնել առաջարկված ժամկետների և պայմանների վերաբերյալ իր համաձայնության մասին,
- վճարել Ապահովագրողին լրացուցիչ ապահովագրավճար (դրա նշանակման դեպքում): Վերոհիշյալ պայմանների չկատարումը դիտարկվում է որպես ապահովագրության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու Ապահովադրի որոշում,

ե) ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում նոր գրասենյակների բացման դեպքում տեղեկացնել դրանց մասին Ապահովագրողին 30 օրացուցային օր առաջ մինչև դրանց բացման ամսաթիվը, որպեսզի դրանց գծով ռիսկերը ավտոմատ կերպով ընկնեն ապահովագրության պայմանագրի ծածկույթի տակ դրանց բացման պահից,

զ) որքան հնարավոր է շուտ, բայց ամեն դեպքում ցանկացած այնպիսի վնասի հայտնաբերման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում, որը կարող է հանգեցնել վկայագրի գծով տարաձայնությունների առաջացման, դրա վերաբերյալ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին, ընդ որում վնասները համարվում են հայտնաբերված, Ապահովադրի այն փաստերի մասին իմանալու պահից, որոնք կարող են հիմանավոր կերպով ծառայել որպես հնարավոր կամ արդեն իսկ առկա վնասի հատկանիշ անկախ այն բանից.

- հայտնի է, թե ոչ այն պատահարի տեղի ունենալու ճշգրիտ ժամանակը, որն առաջացրել է վնաս կամ նպաստել վնասի առաջացմանը, և որը մտնում է սույն ապահովագրության ծածկույթի մեջ,
- ունի, թե ոչ Ապահովադրին այդ պահին բավարար տեղեկատվություն ապացուցելու համար, որ տվյալ վնասը, սույն ապահովագրության պայմաններին համապատասխան, մտնում է ծածկույթի մեջ,
- հայտնի են կամ ոչ վնասի հանգամանքները և չափը:
Վնասի հայտնաբերման ժամ է համարվում նաև այն պահը, երբ Ապահովադրի ստանում է հաղորդագրություն փաստացի կամ հնարավոր դեպքերի մասին, որոնք ծածկվում են ապահովագրության պայմանագրով, ընդ որում կարևոր չէ հայտնի են արդյոք այդ դեպքերի կոնկրետ հանգամանքները և վնասի հնարավոր չափը:

է) Ապահովագրողի պահանջով նրա կողմից սահմանափակ ժամին և վայրում առաքել փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերը, ներառյալ հաշվապահական հաշվետվությունը, ապահովել իր ցանկացած աշխատակցի կամ այլ մարդկանց հետ զրուցելու հնարավորությունը, փոխանցել Ապահովագրողին բոլոր անհրաժեշտ

փաստաթղթերը և կատարել բոլոր ձևակերպումները, որոնք անհրաժեշտ են առաջացած վնասի հետ կապված երրորդ անձանց նկատմամբ ցանկացած գործողություններ կատարելու համար,

ը) վնասի հայտնաբերման օրվանից 6 ամսվա ընթացքում տրամադրել Ապահովագրողին իր պատասխանատու աշխատակցի (ֆինանսական տնօրենի) կողմից հաստատված և վնասի փաստը հաստատող փաստաթղթեր, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն, ընդ որում այն ապացույցների ձեռք բերման պատասխանատվությունը, որոնք հաստատում են, որ Ապահովագրողը վնաս է կրել ապահովագրական պատահարի առաջացման արդյունքում, ինչպես նաև ստորև թվարկված օբյեկտների նկատմամբ մեղավորների հայտանբերման պատասխանատվությունը ընկնում է հենց Ապահովագրողի վրա.

- վնասներ, որոնց հատուցման հավակնությունները առաջ են քաշվում սույն պայմանների 4.1.1. կետին համապատասխան: Ապահովագրողը պարտավոր է ինքնուրույն որոշել վնասի համար պատասխանատու անձին, այն, թե ինչ անօրինական գործողությամբ է պայմանավորված եղել տվյալ վնասի առաջացումը, վարկի ստացման կամ առևտրային գործարքի իրականացման արդյունքում անձի կողմից ստացված ապօրինի անձնական շահի չափը, ինչպես նաև ապացուցել, որ տվյալ վնասը առաջացել է անմիջականորեն անօրինական գործողությունների արդյունքում,
- վնասները, որոնցով հատուցման համար հավակնությունները առաջ են քաշվում սույն պայմանների 4.1.4. և 4.1.5. կետերին համապատասխան: Ապահովագրողը պարտավոր է ինքնուրույն տրամադրել ապացույցներ, որոնք կհավաստեն, որ փաստաթուղթը պարունակում է կեղծ ստորագրություն, կեղծ է կամ որ նրա մեջ կատարվել են կանխամտածված անօրինական փոփոխություններ,
- Ապահովագրողը պարտավոր է ինքնուրույն հավաքել և տրամադրել ապացույցներ, որոնք կհավաստեն, որ նա վնաս է կրել այնպիսի ապահովագրական պատահարի առաջացման արդյունքում, որից տվյալ օբյեկտը ապահովագրված է եղել և որ այն չի եղել տնտեսական իրավիճակի կամ այլ պատճառներով փոփոխության հետևանք, որոնք սույն պայմանագրով նախատեսված ծածկույթի մեջ չեն մտնում, բայց կարող են վնասի հանգեցնել,

թ) ապահովագրական հատուցումը ստանալուց հետո փոխանցել Ապահովագրողին երրորդ անձանց կողմից իրեն պատճառված վնասի և ապահովագրական հատուցման չափի սահմաններում վնասի բռնագանձում իրականացնելու (հետադարձ պահանջի) բոլոր իրավունքները:

10.3. Ապահովագրության պայմանագրով կարող են սահմանվել կողմերի այլ պատակախություններ, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

11. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄԸ, ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ԿԱՐԳԸ)

11.1. Վնասի հայտնաբերման դեպքում Ապահովագրողը պարտավոր է անհապաղ տեղեկացնել դրա մասին Ապահովագրողին՝ ուղարկելով նրան ապահովագրական պատահարի մասին դիմում դրան կցելով բոլոր փաստաթղթերը, այդ թվում իրավասու մարմիններից ձեռքբերված փաստաթղթերը, որոնք հնարավորություն են տալիս հաստատել դեպքի տեղի ունենալու փաստը, վնասի պատճառը և պատճառված վնասի չափը:

11.2. Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում Ապահովագրողը հատուցում է.

ա) ուղղակի իրական վնասը, որը կրել է Ապահովագրողը գույքի կորստի (ոչնչացման), վնասվելու արդյունքում՝ սույն պայմանների 4.1. կետում նշված պատահարների հետևանքով,

բ) փաստաթղթերով հաստատված և հիմնավորված լրացուցիչ ծախսերը (նշված ծախսերի իրական մեծության չափով)՝ պատճառված սույն պայմանների 4.1.4. և 4.1.6. կետերում նշված պատահարների հետևանքով,

- գ) ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասի նվազեցմանն ուղղված ծախսերը,
- դ) ապահովագրական պատահարի հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ ծախսերը:

11.3. Ապահովագրական հատուցման չափի որոշումն իրականացվում է հետևյալ պայմանները հաշվի առնելով՝

ա) Ապահովադրի կողմից երրորդ անձանցից ստացած վնասների ցանկացած փոխհատուցումները, ներառյալ հիմնական պարտքի վերադարձը, այդ թվում տոկոսները, շահաբաժինները, միջնորդավճարները և այլն, անկախ դրանց ստացման ժամկետից, որոնք պետք է հանվեն ապահովագրական հատուցման գումարից, իսկ այն դեպքում, երբ նշված փոխհատուցումները ստացվել են Ապահովադրի կողմից Ապահովագրողից ապահովագրական հատուցումը ստանալուց հետո, ապա Ապահովադիրը պարտավոր է վերադարձնել Ապահովագրողին ավել վճարված գումարը,

բ) արժեթղթերի, արժույթների, թանկարժեք մետաղների նկատմամբ վնասի չափը պետք է որոշվի ելնելով վնասի հայտնաբերմանը նախորդող օրվա դրությամբ աճուրդի ավարտի պահին դրանց արժեքից:

Այն դեպքում, երբ տվյալ պայմանը կատարելը անհնար է, ապա վերոհիշյալ օբյեկտների արժեքը պետք է որոշվի կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ վիճելի հարցերի առաջացման դեպքում դատական կարգով, ընդ որում Ապահովագրողի պատասխանատվությունը տվյալ ապահովագրության պայմանագրով սահմանափակվում է ապահովագրական գումարով,

գ) Ապահովադրի կողմից հաշվապահական, ինչպես նաև Ապահովադրի աշխատանքի համար անհրաժեշտ գրություններ պարունակող այլ փաստաթղթերի կորստի դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն է կրում տվյալ պայմանագրի գծով միայն այն դեպքում, եթե տվյալ փաստաթղթերը կարող են վերականգնվել, ընդ որում հատուցման չափը տվյալ ռիսկի գծով չի կարող գերազանցել ձևաթղթերի (բլանկների) արժեքը և Ապահովադրի կողմից տեղեկության վերականգման վրա անցկացված աշխատանքի արժեքը,

դ) Ապահովադրի կողմից գույքի վնասման, ոչնչացման, կորստի դեպքում, ինչպես սեփական, այնպես էլ այն գույքի նկատմամբ, որի վնասման, ոչնչացման, կորստի դեպքում Ապահովադրին կարող է ներկայացվել պատճառված վնասի հատուցման պահանջ, Ապահովագրողը պատասխանատվություն է կրում այդպիսի գույքի իրական արժեքի սահմաններում, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով: Ցանկացած դեպքում Ապահովագրողի պատասխանատվությունը այդպիսի գույքի գծով սահմանափակվում է ապահովագրական գումարի (պատասխանատվության սահմանաչափի) չափով:

11.4. Ապահովագրության պայմանագրի շրջանակներում որևէ վնասի հատուցման դեպքում վճարված ապահովագրական հատուցման չափը նվազեցվում է համապատասխան ապահովագրական գումարից՝ սահմանված կոնկրետ ռիսկի գծով, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:

11.5. Կրկնակի ապահովագրության առկայության դեպքում հատուցումը վճարվում է Ապահովագրողի կողմից միայն վնասի այն մասով, որը չի ծածկվում ապահովագրության այլ պայմանագրերով:

11.6. Ապահովադրի կողմից Ապահովագրական պատահարի առաջացումը հաստատող փաստերի, պատճառների և վնասի չափի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումից հետո Ապահովագրողը կայացնում է Ապահովագրական հատուցման վճարման/մասնակի վճարման կամ վճարումը մերժելու մասին որոշում առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

11.7. Ապահովագրական հատուցման վճարման/մասնակի վճարման որոշումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կատարվում է Ապահովագրական հատուցումը:

11.8. Վնասների գծով հատուցում ստանալու, ինչպես նաև սույն պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի շրջանակներում որևէ գործողությունների կատարման իրավունքներ չունի ոչ մի շահառու, բացառությամբ այն Ապահովադրի, ում անունով այն տրվել է:

- 11.9. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե.
- ապահովագրական պատահարի առաջացման մասին Ապահովագրողը չի տեղեկացվել ապահովագրության պայմանագրում նշված ժամկետներում, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին տեղեկացվել է ապահովագրական պատահարի առաջացման մասին կամ եթե Ապահովագրողի մոտ այդ մասին տեղեկությունների բացակայությունը չէր կարող անդրադառնալ նրա ապահովագրական հատուցում կատարելու պարտականության վրա,
 - վնասներն առաջացել են այն բանի հետևանքով, որ Ապահովադիրը կանխամտածված չի ձեռնարկել ողջամիտ և հնարավոր միջոցներ հնարավոր վնասները նվազեցնելու ուղղությամբ,
 - ապահովագրական պատահարը առաջացել է Ապահովադրի դիտավորության արդյունքում:
- 11.10. Ապահովագրական հատուցման վճարման մերժման մասին Ապահովադրին տեղեկացվում է գրավոր՝ մերժման պատճառների հիմնավորմամբ:
- 11.11. Ապահովագրողի մերժումն ապահովագրական հատուցման վճարման վերաբերյալ կարող է բողոքարկվել Ապահովադրի կողմից դատարանում:

12. ՍՈՒԲՐՈՂԳԱՅԻՍ

- 12.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:
- 12.2. Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (շահառուի) և վնասների համար պատասխանատու անձի միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:
- 12.3. Ապահովադիրը (շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողի կողմից իրեն փոխանցված պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- 12.4. Եթե Ապահովադիրը (շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքից, կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (շահառուի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու վերադարձնել ավելորդ վճարված հատուցման գումարը:
- 12.5. Եթե Ապահովադիրը կամ Շահառուն երրորդ անձանցից ստացել է պատճառված Վնասի դիմաց հատուցում, ապա Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմանագրի և սույն ապահովագրության Պայմանների պայմաններով նախատեսված վճարման ենթակա գումարի և երրորդ անձանցից ստացած գումարի տարբերությունը:
- 12.6. Բոլոր այն դեպքերում, երբ Ապահովագրական հատուցում կատարելուց հետո պարզ է դարձել, որ դեպքն Ապահովագրական պատահար չէր և/կամ ենթակա չէր հատուցման, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից/Շահառուից ետ պահանջել վճարված գումարը և լրացուցիչ ծախսերը:

13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 13.1. Ապահովագրության պայմանագրից բխող պահանջների գծով հայցը կարող է ներկայացվել հայցային վաղեմության ընթացքում, որը սահմանված է գործող օրենսդրությամբ:
- 13.2. Այն դեպքում, երբ սեփական քննությունից հետո Ապահովագրողը հրաժարվի հատուցել վնասը, որն Ապահովադրի կարծիքով մտնում է տվյալ ապահովագրության ծածկույթի մեջ, Ապահովադրի պահանջով վեճը քննվում է դատարանում:
- Ապահովագրողի անունից դատարանում հանդես է գալիս այն անձը, որը նշանակվել է Ապահովագրողի կողմից որպես իր ներկայացուցիչ: Սույն գործերով վնասի հատուցման

շուրջ հայց կարող է ներկայացվել ոչ շուտ, քան Ապահովադրի կողմից Ապահովագրողին վնասի վերաբերյալ ապացույցների ներկայացման պահից երեք ամիս հետո:

14. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1. Ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողը և Ապահովադիրը կարող են պայմանավորվել ապահովագրության սույն պայմանների առանձին դրույթների փոփոխության (լրացման, բացառման) մասին, այն չափով, որքանով որ դա չի հակասում գործող օրենսդրությանը: